

ՀԻՆ ՀԱՅՍՏԱՆԻ ԵՐԵՒՄՏԵՆ ՍԵՀՄԱՆԸ ՓՈՔՐ-ՀԱՅՔ ԵՆ ԿՈՂՈՓԵՆԷ (ՍԵՐԱՍԻՆԸ)

ԳՐԵՑ Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

Գ.

Մեր քննութիւնը շարունակելէ յառաջ՝ քանի մը խօսք ալ այս՝ եթէ կ'ուզուի նոր ու ինքնաստեղծ «Փոքր-Հայք»-ի եւ անոր ու իրականին համեմատութեան մասին: Մենք հոս խօսք չունինք այն մասին որ նոր գրականութեան մէջ սովորած ենք «Փոքր-Հայք» կոչել իրականին «Մեծ Հայք»-է ոչ նուազ «մեծ» աշխարհամաս մը, այն ամէն տեղերուն, ուր Հայք Բիւզանդեան վերջին շրջանին (մանաւանդ ժԱ. դարէն) գունդագունդ եկան նստելու՝ ամայացրնելով հին Հայաստանը: Հին Կապադոկիան ու Պոնտոսն՝ նաեւ շրջակայիւք՝ լեցուեցան հոծ հայութեամբ, եւ Սելճուկեան-Թաթարական-Օսմանեան տիրապետութեան շրջանին երկրին բնիկ՝ բայց արդէն հոռոմացած՝ տէրերը վերջնականապէս անհետ կ'ըլլան՝ ոչ նուազ այժմ սելճուկեանալով, ինչպէս յառաջ հոռոմացած էին: Զարմանալի է որ ուրեմն հայ տարրը՝ որ զարաւոր վէճ ունէր Յունաց դէմ, ինք զինքը կերպով մը տէր դալ սկսաւ այս աշխարհաց, որոնց պահպանութեան ալ նուազ վաստակաւոր էին իրենց նախնիք՝ հայ բանակներով, հայ զօրավարներով եւ նաեւ հայ կայսրներով, հոգ չէ թէ ասոնք ընդհանրապէս «յունահայ» էին: Միւս կողմանէ չմոռնանք որ Արամայ զրոյցն ու Պոնտոսացի — որ ա՛յնչափ խառնակ տեսութեանց պատճառ եղած է՝ ինչպէս տեսանք — նուազ չէ ազդած տակաւին մեր օրերը: Տարբեր բան ուստի, երբ օրինակի համար Ինճիճեան մը նոր աշխարհագրութեան մէջ՝ այս նոր ընդարձակագոյն իմաստով «Փոքր-Հայք» անուան ներքեւ կ'անու հինգ նոր՝ իւր ժամանակի՝ նահանգներս՝ Սիվաս, «Գայսերիէ, ի հնուն Կապադոկիա», Նիկոն, Մալատիէ եւ Շապին-Գարահիսար (էջ 282 եւն), վերապահելով «Աշխարհք որք եղեն ընդ մերով տէրութեամբ» բաժնին հետեւեալը՝ Միջագետք, Կիլիկիա եւ Սաղար, Եփրատայիք եւ Պաղտիք (Տրապիզոն, էջ 329 եւն): Սակայն որչափ ալ Ինճիճեան՝ բնական իւր ժամանակին համար՝ մեծ կարեւորութիւն կու տար Պոնտոսը զիւրաւ ալ չեն միարանի իրարու հետ: Միով բանիւ պատմագրութեան ոճ մը, որ ա՛յն տպաւորութիւնը կը թողու թէ զրուած ու հաւաքուած է, առանց ակնարկ մը նետելու որեւէ հին աշխարհի լաւ խմբագրուած քարտէսի մը վրայ (օրինակ՝ Կիպրոսի), ճոխ նիւթերով ալ՝ հաւանօրէն շատ տեղ աւելի զազախարաց խառնակութիւն պիտի պատճառէ քան լուսաւորութիւն խնդրականաց: Առնունք «Փոքր-Հայք» անուն ու զիւրքը: Բնականապէս յառաջ կը բերուի Պոնտոսացու ծանօթ կտորը՝ Արամայ եւն մասին: Եւ արդէն Պայսապիս Քաղեայ տիտանի երկիրը՝ «Վիլոյց երկուց ծովուց մեծամեծաց՝ Պոնտոն եւ զՈվկիանու»՝ կը չափուի Պարիսի երկայնութեան եւ լայնութեան չափերով: «Բայց ոմանց ասի շատ ընդարձակ երեւնալով՝ կ'ամփոփեն Ա., Բ. եւ Գ. Հայք անուանեալ գաւառներով միայն»՝ յաջորդելով զարձեալ Պարիսի երկայնութեան եւ լայնութեան չափերը (էջ 489) — առանց անդրադառնալու թէ որեւէ խնդիր մը չկա՞յ հոս, եւ իրականին եղա՞ծ են երբեք երբեք «Հայաստաններ» այս «արեւմտեան մեր կողմը»: Կը նկարագրուի այս «Փոքր-Հայք»՝ «Պոնտական ծովէ եւ Միջերկրականէն» քիչ մը հեռացած, բայց այնչափ մեծ որ «Արդէս լեռնէն մինչեւ Գոհանամ լեռը ձգուած լեռանց զիծ մը կը բաժնէ Փոքր-Հայքն երկու մասի, հիւսիսային եւ հարաւային», դէպ ի Սեւ ծով գետերովս «Աղիս, Իրիս եւ ուրիշներ», եւ «դէպ հարաւ կ'իջնեն Սար (Մէհուն) եւ Պիւրամ (Ճիհան) գետերն իրենց արբանեակներով» եւն եւն: Ամբողջ ստորագրութիւնը կարգացողն ակամայ կը յիշէ բնիկ տեղացի եւ ճշգրտագիր Ստրաբոնի նկարագրութիւնը — որմէ թերեւս արդէն քաղուած է այս տեղւոյ աղբիւրը — միայն թէ Ստրաբոն կը խօսի Կապադոկիայի մասին, մենք այսօր տակաւին՝ «Փոքր-Հայք»։ Եւ ճիշդ է համեմատութիւնը. Ստրաբոն ալ կը խօսի Մեծ Կապադոկիայի մը մասին, «սահմանակից Հայք»՝ «ի ծոցոյն Իսոսի մինչեւ ի հարաւային արեւելեան ծայր Եւքսինոս ծովու», եւ յետոյ Պոնտոսով՝ փոքրացած Կապադոկիայի մը մասին (Ստրաբոն, ժԱ.—ժԲ): Մեր «Փոքր-Հայք» համար այժմ պէտք է քիչ շատ նաեւ Պոնտոսը: Հեղինակն որեւէ տարբերութիւն չէ գրած Պոնտոսացու եւ Յովհաննու կաթողիկոսի Ա.—Գ. բաժանմանց մէջ, ո՛չ ալ որեւէ խնդրոյ նիւթ մը՝ Պոն. Աշխ. աւանդութեան մասին.

1 Աշխարհագրութիւն. Մասն Ա., Ասիա: Հատ. Ա.: Վենետիկ 1806:

ըննացուց եւ հետեւողաց (հմմտ. հոս ալ էջ 309 «Գայսերիէ, ի հնուն Կապադոկիա, ի զիրս մեր կոչի նաեւ Երկիր Գամրաց եւ Առաջին Հայք» եւն). նոյն իսկ այս գրոց մէջ, թո՛ղ թէ իւր միւս՝ իւր ժամանակին նշանաւոր գործերը՝ երբեք միակողմանի չէ, եւ ոչ անտես ըրած իրական հնութիւնը՝ ըլլայ գամրական կամ պոնտական, եւ յաճախ զիտցած է՝ զոնէ ջանացած՝ հաշտեցընել օտարաց եւ այն մերոց հակասականները: Յամենայն դէպս՝ իւր հմտութեամբ իսկ հնութեան՝ չէր կրնար, որչափ ալ մեծ արժէք տար Պոնտոսացու իւրաքանչիւր խօսքին, գործել շարք մ'այն խառնակութեանց՝ զոր կը գտնենք նորագոյններու քով: Ասոնք, արդի այսչափ ուսումնասիրութիւններէ, Պոնտոսացու զրուցաց նկարագրին ու իր ազդերաց քննութիւններէ, իւր պատմագրութեան բաղձակողմանի լուսաբանութիւններէ ետքն ալ յաճախ եւ ո՛չ կ'անդրադառնան թէ զոնէ վիճելի բան մը կայ այս կամ այն կէտին մէջ: Իբր օրինակ կ'ուզենք յիշել հոս գործ մը՝ որ, կը ցաւինք, մեր ձեռքն ինկաւ՝ յաջորդ ուսումնասիրութիւնը գրելէն ետքն, եւ այն՝ տակաւին միայն մասամբ: Աւելորդ չէր մերթ ընդ մերթ անդրադառնալ՝ յընթացս ուսումնասիրութեան՝ ասոր գրածներուն, զոնէ քիչ շատ ճշգրտութեամբ՝ ուր պէտք էր, բայց նաեւ օգտուելու յաճախ՝ ըստ երեւութիւն ճոխ ատաղձ մը:

Մեր ակնարկած գործն է Անդրէաս Վ. Աղեքսանդրեանի «Պատմութիւն Սերաստիոյ» (տպ. Վենետ.): Զունինք գործս առձեռն, բայց ունինք երկու ընդարձակ քաղուածքներ՝ իբր նմոյշ գործոյն՝ հրատարակուած բանասիրական թերթի մը մէջ<sup>2</sup>: Հոս կը պարունակուին արդէն հնութեան վերաբերեալ կարեւոր բաժինները, ուստի կը բաւեն մեր նպատակին: Որչափ կրնանք դատել այս մասերէն՝ Հեղինակն իրօք ճոխ ատաղձ մը հաւաքած է, օգտուելով երոպացի գիտնոց ալ գործերէն, թէեւ մի քիչ հին երկերէ. վասն զի շատ պակաս կը գտնենք նոր ուսումնասիրութիւնքն, հնութեան իրաց եւ տեղեաց նոր ճշգրտութիւնը եւն, միով բանիւ հոս կրկնուած կը գտնենք շատ բան՝ զորոնք այսօր կարելի ըլլալու չէր կրկնել: Աւելի փաստակար կը գտնենք այն որ կրկնուած են՝ իրարու քով, առանց իսկ շատ լուսարանելու, նաեւ իրեր՝

2 ԲՁՄ. 1910, Թ. 11, էջ 488—498, եւ Թ. 12, էջ 519—529:

որոնք զիւրաւ ալ չեն միարանի իրարու հետ: Միով բանիւ պատմագրութեան ոճ մը, որ ա՛յն տպաւորութիւնը կը թողու թէ զրուած ու հաւաքուած է, առանց ակնարկ մը նետելու որեւէ հին աշխարհի լաւ խմբագրուած քարտէսի մը վրայ (օրինակ՝ Կիպրոսի), ճոխ նիւթերով ալ՝ հաւանօրէն շատ տեղ աւելի զազախարաց խառնակութիւն պիտի պատճառէ քան լուսաւորութիւն խնդրականաց: Առնունք «Փոքր-Հայք» անուն ու զիւրքը: Բնականապէս յառաջ կը բերուի Պոնտոսացու ծանօթ կտորը՝ Արամայ եւն մասին: Եւ արդէն Պայսապիս Քաղեայ տիտանի երկիրը՝ «Վիլոյց երկուց ծովուց մեծամեծաց՝ Պոնտոն եւ զՈվկիանու»՝ կը չափուի Պարիսի երկայնութեան եւ լայնութեան չափերով: «Բայց ոմանց ասի շատ ընդարձակ երեւնալով՝ կ'ամփոփեն Ա., Բ. եւ Գ. Հայք անուանեալ գաւառներով միայն»՝ յաջորդելով զարձեալ Պարիսի երկայնութեան եւ լայնութեան չափերը (էջ 489) — առանց անդրադառնալու թէ որեւէ խնդիր մը չկա՞յ հոս, եւ իրականին եղա՞ծ են երբեք երբեք «Հայաստաններ» այս «արեւմտեան մեր կողմը»: Կը նկարագրուի այս «Փոքր-Հայք»՝ «Պոնտական ծովէ եւ Միջերկրականէն» քիչ մը հեռացած, բայց այնչափ մեծ որ «Արդէս լեռնէն մինչեւ Գոհանամ լեռը ձգուած լեռանց զիծ մը կը բաժնէ Փոքր-Հայքն երկու մասի, հիւսիսային եւ հարաւային», դէպ ի Սեւ ծով գետերովս «Աղիս, Իրիս եւ ուրիշներ», եւ «դէպ հարաւ կ'իջնեն Սար (Մէհուն) եւ Պիւրամ (Ճիհան) գետերն իրենց արբանեակներով» եւն եւն: Ամբողջ ստորագրութիւնը կարգացողն ակամայ կը յիշէ բնիկ տեղացի եւ ճշգրտագիր Ստրաբոնի նկարագրութիւնը — որմէ թերեւս արդէն քաղուած է այս տեղւոյ աղբիւրը — միայն թէ Ստրաբոն կը խօսի Կապադոկիայի մասին, մենք այսօր տակաւին՝ «Փոքր-Հայք»։ Եւ ճիշդ է համեմատութիւնը. Ստրաբոն ալ կը խօսի Մեծ Կապադոկիայի մը մասին, «սահմանակից Հայք»՝ «ի ծոցոյն Իսոսի մինչեւ ի հարաւային արեւելեան ծայր Եւքսինոս ծովու», եւ յետոյ Պոնտոսով՝ փոքրացած Կապադոկիայի մը մասին (Ստրաբոն, ժԱ.—ժԲ): Մեր «Փոքր-Հայք» համար այժմ պէտք է քիչ շատ նաեւ Պոնտոսը: Հեղինակն որեւէ տարբերութիւն չէ գրած Պոնտոսացու եւ Յովհաննու կաթողիկոսի Ա.—Գ. բաժանմանց մէջ, ո՛չ ալ որեւէ խնդրոյ նիւթ մը՝ Պոն. Աշխ. աւանդութեան մասին.

Յովհ. Կաթ. մանաւանդ թէ «ճշգրտ է» Պոնտոսացու ըսածն: Եւ զասոնք յառաջ բերելէն ետքը՝ իբր թէ նոյն բանն ըլլար՝ յառաջ կը բերուի Պոնտոսացու զիւրին ալ «արտաքին պատմագրաց... իբր հնագոյնը», եւ կը լուսաբանէ Պոնտոսացու իրական Փոքր-Հայք մասին գրածը՝ թէ «կը բովանդակեն բոլոր այն երկիրներն՝ որ կան Եփրատայ արեւմտեան կամ աջակողմը, Կիլիկիայի սահմանէն մինչեւ Մելոս, հիւսիսէն դէպ ի հարաւ երկնալով» եւն (էջ 490): Խնդիր չընենք վերջնոյ մասին. բայց թէ ասի՝ եթէ իրական սահմաններով մտածուած է, ի՞նչպէս կը համաձայնի Յովհ. Կաթողիկոսի եւ նմանեաց «Հայք»-երու հետ — այս կէտը չկրցանք ըմբռնել:

Աւելի խառնակ է հոռոմեական բաժանմանց մասը: Հեղինակը կը յիշէ Կոստանդիանու սահմանածը, Յուստինիանու եւ Մաւրիկի բաժանումները (վերջինս՝ միայն ըստ Յովհ. Կաթողիկոսի). բայց թէ ո՛րչափ վերիվերոյ ըմբռնուած է իբր, կը բաւէ յիշել միայն առաջինը: «Արեւելեան Նախարարութեան (այսինքն՝ իշխանութեան «վասն Արեւելից Զօրավարի») Պոնտական վիճակին մէջ (այսինքն՝ «Պոնտական թեմ»), ուստի ասի զինուորական վարչութիւնն է) կը գտնուէին այս երկու գաւառները. Արմենիա Առաջին, Սերաստիա. — Արմենիա Երկրորդ, Մելիտենէ: Առաջին Հայոց մայրաքաղաքն էր Սերաստիա, ուր կային նաեւ Սերաստուպոլիս, Նիկոպոլիս, Կոլոնիս, Սատաղա, Ամփիպոլիս, Պերիսա, Հերակղեպոլիս կամ Պիտաքատլէ քաղաքներն: Ետքէն աւելի եւս ընդարձակուեցաւ այս գաւառն, իւր մէջը գրաւելով Երիզա, Կամախ եւ Թէոդուպոլիս գաւառները»: — Սպասենք պահ մը: Ասի Թէոդոսեան Ա. Հայքն է: Քաղաքաց անուանքն եւ յիշելու կերպը որչափ կը ցուցընէ ոմանց մասին շատ պայծառ չեն տեղագրական գետեղումները, բայց ասի կը թողու: Էականն է այն խնդիրը՝ ե՞րբ արդեօք եղած է որ «այս գաւառն» իւր մէջ «գրաւած» ըլլայ Երիզա, Կամախ եւ Թէոդուպոլիս «գաւառները»: Նախ անճիշդ ըմբռնում մըն է թէ այս Ա.—Բ. Հայք աշխարհագրական «գաւառներ» ըլլան, որոնք էպպէս անփոփոխ մնալով՝ կ'ընդարձակին երբեմն կամ կը պղտիկան: Ասոնք — պէտք չկայ կրկնելու — վարչական բաժանումներ էին, «վերայէթ»՝ եթէ կ'ուզուի, որոնք՝ հոռոմեական-բիւզանդեան վարչութեան ներ-

քեզ շատ փոփոխուած են: Յուստինիանու «Ա. Հայքը» յիշած է ինքը Հեղինակը, եւ հոն կը գտնէր «Սատաղա-Նիկողոսիոս-Կողոնիա», ուստի Փոքր-Հայքը՝ որ միացած է Բարձր-Հայոց (Երիզա, Կամախ, Թէոդուպոլիս)․ բայց ո՛չ երբեք այն միջոցին միւս Սերաստիա-Նիկողոսիոս-Սերաստուպոլիս շրջանին հետ՝ որ ուրոյն է այնուհետեւ (Յուստ. «Բ. Հայք»), ինչպէս ինքը կը յիշէ: Նոյնպէս՝ Մաւրիկի օրով: Իսկ յետոյ՝ թեմերու դրութեան ատեն՝ երբ հսկայ «Արմենիակոնի» կ'ենթարկուէին ասոնք ալ, յամենայն դէպս գոնէ Թէոդուպոլիս գուրս հանելու է, վասն զի ա՛լ արաբական էր եւ մնաց: Մանրաբաժանմանց ատեն՝ Կամախ կը վերաբերէր Կողոնիոյ թեմին, բայց Երիզա՝ արդէն Պաղտեայ թեմին էր եւն: Իսկ երբեք ուրեմն եղած չէ որ Երիզա, Կամախ ու Թէոդուպոլիս «գաւառներն»՝ քաղաքային վարչութեամբ՝ միացած ըլլան Սերաստիոյ եւն «գաւառին» հետ:

Աւելի զարմանալի է յաջորդը՝ «Երկրորդ Հայոց մայրաքաղաքն էր Մելիտենէ. կային նաեւ Արկա, Կոմանա Կապադոկիոյ, Արաբիսոս, Կիթարիձոր: Երբեմն նաեւ Սոփիէնէ (Ծոփք) եւ Տրոսպոնդիս կամ Տիոսպոնդիս»: — Թողունք վերջինս Հեղինակին. «Կիթարիձոր» իսկ առանձինն կը ցուցնէ թէ քաղաքած է երոպական գրքէ մ'առանց անդրադառնալու թէ սա մեր Կթոնի՞ն է, որ Սոփիենայ կամ Ծոփաց հետ «երբեմն» Մելիտենայ (Թէոդ. «Բ.», Յուստ. «Գ.», Մաւրիկ՝ «Ա.») Հայոց վերաբերած պիտի ըլլայ: Ե՛րբ արդեօք եղած է «Գ. Հայոց» այս միացումը: Մեզի լիովին անծանօթ է, ցորչափ իրական գոյութիւն ունէին այս «Հայք». իսկ անկէ ետքն արդէն թէ՛ Մելիտենէ եւ թէ՛ Ծոփք կարգաւ արաբական եղան եւ միայն Ժ. դարուն կրցան ետ առնուիլ:

Սակայն չենք կարող ուղղել ամէն կէտ: Ուստի շատանաք նշանակելով որ Յուստինիանու բաժանմունքը, Յովհ. կաթողիկոսի՝ Մաւրիկի բաժանման մասին գրածն — առանց գիտողութիւն մ'ընելու — եւ քանի մը խօսքով Ծիրանածնի թեմերու մի քանին յիշելէն ետքը՝ սա վերջնական եզրակացութեան կու գայ Հեղինակը, կարծես Պորենացւոյ Արամէն մինչեւ Ծիրանածնի քանի մը թեմերը միասին «Այս բաժանմունքներէն՝ գորոնք վերը յիշատակեցի, Կոստանդիանոսի ըրածը լուսագոյն կը թուի, եթէ ներուի տալ ընդարձակութիւն մը դէպ ի հիւսիս: Ասանկ

այժմու Եւզոկիոյ, Սերաստիոյ, Նիկողոսիոյ եւ Մելիտենոյ Օսմանեան սանճազները, արեւմտեան մասամբ Պարբերդի կը կաղմեն Առաջին, Երկրորդ եւ Երրորդ Հայք. պէտք է յաւելուլ նաեւ Սմասիա եւ այլ ինչ ինչ տեղեր եւ այլ կողմերէն՝ արեւմտեան Հայաստանը ճիշդ ունենալու համար»: — Ներուի ըսել՝ սա արդէն կամայականութիւն է. Եւզոկիոս որեւէ շրջանի երբեք «Ա.» կամ այլ «Հայք» չէ եղած, որչափ ալ կենդրոն էր յետոյ «Արմենիակոն» թեմի. եւ Պարբերդ ալ երբեք «արեւմտեան» կողման չէ վերաբերած կամ Ա.—Գ. «Հայքի» մը, այլ միայն «Գ. Հայոց» կամ Ծոփաց: Իսկ Սմասիա՞: Ի հարկէ երբ Գամբաց մայրաքաղաքը Կեսարիա «Փոքր-Հայք» կ'ըլլայ, Պոնտոսի արքայանիստն ալ պակսելու չէր: — Իսկ անդին՝ բուն Փոքր-Հայքը. սա կ'երեւայ գոյութիւն չունի, այլ միայն այն «մեծ» «Փոքր-Հայք»ը, որուն «սահմանն հին ատենէ շատ մը փոփոխութեանց ներքեւ ինկած է» եւն (էջ 492):

Ինչո՞ւ կը դրուին այս ամէնը: Միթէ ա՞յն համոզմամբ թէ իրօք այս ամէն երկիրները — քիչ շատ ամբողջ Կապադոկիոյ եւ Պոնտոս — հնուց իսկ հայ եւ հայաբնակ աշխարհն էին, եւ ուրեմն Գամբաց ու Պոնտացւոց գարաւոր պատմութիւնն քիչ շատ միայն տիրող խաւի՞ մը բան էր: Որչափ արտառոց երեւայ այսօրս այսպիսի ըմբռնում մը, կ'երեւայ թէ իրն այսպէս ըմբռնողներ ալ կան: Չենք կարող Հեղինակին ամբողջ «Փոքր-Հայոց բնակիչներ» գլուխը (էջ 492 եւն) յառաջ բերել, թէ եւ շատ հետաքրքրական եւ անսովոր կէտեր կան: Այսպէս առաջին տողէն իսկ կ'ըսուի թէ «Փոքր-Հայոց Եփրատէն աւելի կամ նուազ հեռու գաւառները, Կապադոկիոյ հետ միանդամայն, որուն երբեմն մաս էին, բնիկ Հայաստանէն շատ ուշ բազմամարդ եղան բնակիչներով... ամայի անապատ մըն էր այն, եւ հազիւ ուրեմն տեղ տեղ ցան եւ ցիր բնակութեան նշմարանք կը տեսնուէր... եւ Մետացւոց եւ Հայոց հետ կցորդութեամբ՝ մարդուեցան քաղաքական կարգերու եւ կրօնքի մէջ (չի մոռցուիր Պորենացւոյ խօսքն ալ «գրագում անբնակ երկիր էլից բնակչօք» եւն): Եթէ ասոնք նորամուտ Գամբաց առաջին շրջանին համար են՝ խօսք չունինք: Բայց գոնէ տարօրինակ է «Բնիկ Հայաստանէ շատ ուշ բազմամարդ» ըսել երկիր մը, որ Հատաց որորանն էր, եւ որուն՝ միայն Բողաղ-քէօյի աւերակները կը բաւեն

նախկին մեծութեան եւ քաղաքակրթութեան յայտարար ըլլալ, իւր յիշատակարաններով նաեւ ԺՅ. Ն. Ք. դարուն եւ աւելի հին ալ, եւ երկիր մը՝ ուր գտնուած սեմական աղիւսազիրք իսկ աւելի խոր հնութիւն կը ցուցնեն: Ասոնք ի հարկէ ծանօթ չեն Հեղինակին կամ իւր աղբեր, եւ որ թեթեւ յիշատակութեամբ Գամբիք, Մոսոքի եւ Հերոզոտու Սպիտակ-Ասորոց՝ կը հասնի սա աւելի տարօրինակ եզրակացութեան. «Եփրատի արեւմտեան կողմն եղող գաւառներուն, մանաւանդ անոնց՝ որ նոյն գետոյն աւելի մօտ են, բնակիչները հին ժամանակներէ ի վեր Հայք էին մեծագոյն մասաւր, կամ Հայերէն սերուած (— ասի գոնէ տարբեր բան է —) որոնք եկեր փոխանակեր են թերեւս յառաջագոյն հոն բնակած հնագոյն ազգերը, եւ այսպէս մասն եղաւ Հայոց աշխարհին եւ անուանեցաւ Նոր կամ Փոքր Հայք անկէց ետեւ»: — Եթէ արդէն տարակոյս մ'ունենայինք թէ այս ամբողջ նորանշանութեանց հիմն ուղղակի այս համբաւաւոր «Փոքր-Հայք»ի շիթ ըմբռնումն է, այս տողերը կը բաւեն համոզել: Արդէն ամբողջ դորոնք մէջ ալ կը տեսնուի թէ Հեղինակը՝ որչափ ալ յիշած է Պաղտեայ կտորը, բուն հայ Փոքր-Հայքը՝ չի ճանչնար իւր ուղիղ սահմաններով, եւ շիթած է զայն մէկ կողմանէ հոռմէական Ա.—Բ. Հայոց հետ, եւ միւս կողմանէ գասոնք ալ խառնած մեր նոր նոյնչափ հոռմէական «Փոքր-Հայք»ի հետ: Բայց աւելին կայ. Հեղինակն ամենադոյզն կասկած չունի թէ այս ամէն տեղեր ու բնակիչք՝ «մեծագոյն մասամբ» Հայք, «պահած էին եւ կը խօսէին իրենց բնիկ բարբառը... եւ թէպէտ... շատերը վարժեցան յոյն լեզուին, բայց անշուշտ չմոռցան բոլորովին իրենց հայ լեզուն» — «կար նոյն աշխարհին մէջ անշուշտ եւ հայ դպրութիւն յաւանական տառերով, ինչպէս Մեծ Հայոց մէջ սովորութիւն ունէին յոյն եւ ասորի տառերով հայերէն սորվեցնելը» (ձրի ենթադրութիւն՝ որուն կը վերադառնանք): Ասի ըլլալու էր, կ'ըսէ, քանի որ «Փոքր-Հայք ծագեալ եւ բարգաւաճ էր», մանաւանդ քրիստոնէութեան շրջանին եւն եւն: Ապացոյց՝ չկայ շատ. բայց ահա եղածները. «Փոքր-Հայոց հասարակաց բարբառ եղաւ հայերէն Արամայ քաջի օրերէն»: — Ասի արդէն կը բաւէ. բայց Արամայ գրոյցը գոնէ կ'աւելցընէր թէ տեղացիք մինչեւ անգամ «Մշակ» մը չկրցան «ուղղախօսել»: — «Մելիտենոյ Եպ.

Ակակ կը ջանար Հայոց լեզուին դիր յարմարեցնել... Մետրոպ վարդապետին հետ»: — Ով որ չի համոզուիր՝ ա՛լ յոյս չկայ: Այս հանուով ա՛լ բոլորովին գուտ հայ ըլլալու են նաեւ «ասորի» եպ. Դանիէլ եւ համբաւոր «գրիչ ոմն հելլենական դրութեան Հոսիանոս», իսկ իւր «քաղաքն Սամոստացւոց» ալ «Հայաստանի» ամենահարազատ քաղաքը: Արաթանգեղոս կը պատմէ, կ'ըսէ, թէ Ս. Գր. Լուսաւորիչ երբ Սերաստիա եկաւ՝ անկէ «բազմութիւն եղբարց» եւ «գունդ գունդ կը սանէր իր հետն՝ որ վիճակեցընէ Մեծ Հայոց մէջ քահանայութեան. արդ թէ որ հայերէն չգիտնային, ի՞նչ բանի կ'ուզէր ինքը տանիլ» եւն: Պատմածը ճիշդ է ըստ Արաթանգեղայ: Հայագէտք ալ կրնային ըլլալ եւ շատ. բայց Ս. Գրիգոր իրօք միա՞յն հայագէտներու պէտք ունէր, որոնք Հայաստանի մէջ գոնէ քիչ մ'աւելի էին քան այս հոռմէական «Փոքր-Հայք»ի մէջ. եւ ինչո՞ւ յանկարծ քրմաց մանկունքն են կը ժողովէին «եւ գնոսս յերկուս բաժանեալ. դոմանս յասորի դպրութիւն կարգեալ եւ դոմանս ի հելլէն» եւն (Աղ. , էջ 626. հմմտ. Կորիւն, էջ 9): Թողլով այս եւ նման խնդրոց յարակիցք, որոնց յետոյ ստիպուած ենք վերադառնալ, կարծենք՝ Ս. Գրիգորի օրով իսկ՝ Տրդատ քիչ մ'աւելի յոյն արուեստագէտներու եւ յունագէտներու պէտք ունէր, երբ — քանի որ Հեղինակին քով շատ մեծ ճոխութիւն ունի Պորենացի՝ անկէ յիշելու համար — կ'աւարտէր «Տրդատ գլխունուած ամբողջն Գառնոյ, զոր որձաքար եւ կոփածոյ վիմօք, երկաթագամ եւ կապարով մածուցեալ, յորում շինեալ եւ տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Պոսրովիդիտոյ, եւ գրեալ ի նմա գլխաւալ իւր հելլենացի գրով» (Պոր. Բ. , դ) . — ուր Պոր. յանցաւոր չէ՛ երբ ձրի կը հասկըցուի իւր «յունատառ հայերէն», մինչ ա՛յս չէ «գիր» (= դպրութիւն, լեզու) բառին իմաստը՝ հոս եւ շատ նման տեղեր: Յաւալի՛ բայց իրականութիւն է որ նաեւ տակաւին Մետրոպայ օրով «պաշտօն եկեղեցւոյ եւ կարգացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ յեկեղեցիս Հայաստան ժողովրդոց. յորմէ ոչինչ էին կարող լսել եւ օգտել ժողովուրդն» եւն (Փարպ. , էջ 36) — յունականին՝ Պարսից բաժնի մէջ արդիւուելէն ետքը: Եւ դժբախտաբար թէ բարբառաւոր՝ յոյն կրթութեան եւ լեզուի մասին տար-

բեր դադարաբար ունենին նախնիք, արդէն կանոնախնայ Տիգրանայ Մեծի իսկ արքունիքը լի էր յոյն արուեստագէտներով, որոնց հովանաւորողն էր իւր կինը՝ Կղէոպատրա, Միհրդատայ Մեծի դուստրը, եւ իւր արքունիքն ապրող Մետրոդոր Սկեպտացին էր որ Տիգրանայ պատմութիւնը գրած կ'աւանդուի (Ստրաբոն, ԺԳ, ա, 55 էւն)։ Եւ Տիգրանակերտի մէջ յունական թատերախումբ մը ներկայացումներ կու տար (Պղոտարքոս, Լուկ. 29), եւ նոյն ինքն թագաժառանգ եւ ապագայ արքայն Արտաւազդ անուանի մատենագիր իսկ էր (Պղոտարքոս, Կրատոս, 33), բայց յունարէն, ո՛չ «յունատառ»։ Բայց պէտք չկա՞յ արդեօք շարունակելու։ Արտաւազդ ի հարկէ ասոր համար յոյն չէր եւ չեղաւ, բայց նաեւ Ս. Գրիգորի օրով Սերաստիա եւն քանի մը նաեւ շատ՝ հայագէտ գտնուելուն — եթէ ընդունինք անգամ այսպէս ըլլալը — չի հետեւիր թէ ամբողջ «Փոքր-Հայք»՝ այսինքն իրականին Գամիւրք ու Պոնտոս՝ Հայ էին եւ հայախօս։ — Սակայն մոռցանք փաստ մ'ալ. «Եւստրատիոսեանց պատմութեան մէջ կը գրուի որ Սերաստիոյ Ս. Վլաս եպիսկոպոսը հայերէն կը խօսէր Ս. Եւստրատիոսի հետ, յոյն կամ հոյժմայեցի դասճէն ծածկելու համար իրենց խօսակցութեան նիւթը»։ Թէ Ս. Բղասիոս («Վլաս») ազգաւ հա՛յ էր թէ ոչ՝ ինչիւր մըն է որ հոս նշանակութիւն չունի<sup>3</sup>։ Բայց Ս. Եւստրատիոսի եւ ընկերաց վկայաբանութիւնը՝ որ կ'ախարհուի (տես անդ, Բ., 435—475), կը յիշէ այնպիսի բան մը. սակայն ամբողջը կը վերաբերի իրական Փոքր-Հայոց։ Դատարարութիւնն ալ տեղի կ'ունենայ նախ «ի Սատաղացեոց քաղաքին», ուր էր «գուքս Լիւսիաս»՝ իբր հրամանատար, մինչդեռ քաղաքական վարիչն էր «Ագրիկոպոսոս գառաւորն ի մայրաքաղաքն Սերաստացեոց» (— այս ժամանակ ո՛չ իրօք «մայրաքաղաք», բայց արդէն իրաւունքով այս տիտղոսի՝ Կոզոմիենայ համար, բուն մայրաքաղաքն էր Նէոկեսարիա. տես Կիւմոն, «Պոնտ. Ուսումն», Բ., § 16, Անդերսոն, անդ, Ա., § 16 էւն. բայց այս վարքերը արդէն շատ ուշ խմբագրուած են)։ Եւստրատիոս նշանաւոր տոհմէ է՝ բայց հայ («Արարակացեոց քաղաքն եմ ես ազգաւ եւ տոհմիւ»)։ Գինուորական ծառայութեան մէջ մտած կանուխէն («գեքսկեպոտորոսի պէտս լնոյր»՝ exceptor),

<sup>3</sup> Համառոտ վկայաբանութիւնը տես «Վարք եւ վկայք», Վենետիկ 1874, Ա., 382—389։

յետոյ շատ բարձրացած («իշխան» էւն)։ Եւ «ի դասուց բզեշխին Լիւսիասայ» եւ բնականապէս «իբրու զի հայրենի հեղինակամ իմաստութեամբ լցեալ» էւն։ Դատար կ'ըլլայ Սատաղա՝ «ի Թէատրոնն»։ Ետոյ կու գան «ի Նիկոպոլսեցեոց քաղաքն», եւ անկէ «հասանէր յետ երկուց աւուրց եւ բանակէր մերձ առ դղեկին որ է հուպ ի քաղաքն Արաւրակացեոց»։ Հոս «Մարգարիոս ոմն ուսմիկ»՝ երբ «ծածկէր զձեզունս տանն» կը տեսնէ վկայքն որ կապեալ կ'անցնէին «ընդ պողոտայն որ էր մերձ ի գետին յայն», կը ճանչնայ զԵւստրատիոս եւ կ'աճապարէ «եւ ասէ ցկինն իւր զրուցատրութեամբ ի բարբառ հայերէն. Ո՛վ կին, տեսանե՞ս զտէրն մեր Եւստրատիոս՝ անուանեալ Կիւրիւկոս, զիշխանն ամենայն շրջաբնակութեանս մերոյ» էւն. եւ ինքն ալ կը հետեւի եւ վկայակից կ'ըլլայ, իւր տունը յանձնելով նոյն դիւղէ «մեծատան, որ էր այր երեւելի... որում անուն էր Մուսատարիոս» եւ «ազգակից» Եւստրատիոսի։ Դուքսը նորէն կու գայ Նիկոպոլս. հոն «բազումք ի զօրականաց յայնմ զնդէ՝ որ ի քաղաքին էին» կը յայտնեն թէ իրենք ալ քրիստոնեայ են։ Դուքս կը վախճայ ապստամբութենէ մը («ոչ միայն որ քրիստոնեայքն են... այլ եւ զՀելլենացիս ապստամբեցուցանէ» էւն) եւ կը խաւրէ Ագրիկոպոսի «ի քաղաքն Սերաստացեոց»։ Ծամբան կ'անցնի «մերձ ի ձորակ անդր, զոր մեք Լեռնատն անուանեմք», եւ հինգ օրէ կու գան Սերաստիա։ Հոս նախ կը վկայէ Ս. Ովրեստէս, եւ «արք քաղաքին Սերաստիոյ հանդերձ կանամքք եւ սրբուովք ժողովեալ էին ի տեսիլ սրբոցն»։ Հոս բանտին մէջ Ս. Եւստրատիոս կը գրէ իւր կտակը, կը տրամադրէ որ սրբոց նշխարքը տարուին «յԱրաւրակացեոց քաղաքն եւ դնել յայցելում տեղու՞ր որ կոչի Բոսոսա», իւր «զհայրենի ստացուածս նորա որ յԱրաւրակացիսն էր» բաժնել աղքատաց եւ մէկ մասը «քերց իւրոց» էւն։ Բանտի մէջ կը տեսնէ «գեպիսկոպոս քաղաքին Սերաստիու», անոր կը յանձնէ կտակը էւն։ Վերջապէս կը վկայէ հոն, եւ «զկական բարձեալ... լային եւ ամենայն Հելլենացեոց բազմութիւնս հանդերձ քաղաքացեօքն» էւն։ Եւ «եպիսկոպոս քաղաքին» որում անուն էր Պետրոս» կ'առնու սրբոց նշխարքը եւ կը տանի «ի հայրենի գաւառն իւրեանց յԱրաւրակացեոց քաղաքին» էւն։ Իսկ Արաւրակայ եկեղեցեոց քահանայն է Ալեքսանտրոս։ — Ա՛յս է հայ բնակիրը. շատ

պէսպէս են վարուց խմբագրութիւնք, եւ կան որ Ս. Բղասիոս ալ կ'ըսեն։ Դժբախտաբար չունինք հոս առձեռն յոյն բնագիրքը՝ տեսնելու թէ կա՞յ իրօք եպիսկոպոսին ու Եւստրատիոս հայերէն՝ իբրեւ ծածուկ՝ խօսելու պարագան։ Շատ ալ չի յարմարիր ըստ ինքեան, որովհետեւ եպիսկոպոսը «եկն ի ծածուկ ի դիւերի ի բանտ անդր, տուեալ ինչս պահապանացն»։ ուստի դիւերը նաեւ ուրիշներ կու գան («ի պատշաճաւոր պաշտօնէից բերեալ լինէր խորհուրդն սրբութեան» էւն)։ Եւ կասկածի տեղի կայ անկէ որ նման բան մը կը պատմուի ուրիշ Վարքի մը մէջ։

(Շարունակելի։)



**Գ Ի Ո Ն Ե Ս Ի Ո Ս Բ Ե Ր Ս Ե Լ Ի Բ Ի Ո  
Հ Ե Կ Ե Ծ Ը Թ Ո Ռ Թ Ի Ի Ն Ը Հ Ե Յ Ո Յ Գ Է Մ**

(Շարունակութիւն։)

Գ Լ Ո Ւ Ե Զ .

Հայոց սովորութիւններու դէմ։

Դարձեալ խայտառակներ անոնց տղիտութիւնը որ հրէական սովորութիւններու ետեւէն կ'անձկայ։ Մեծ Հայքի գաւառաներուն մէջ Պասեքի տօնին գառնուկ կը զոհեն եւ անոր արիւնը կը սրսկեն սեամքին ու մուտքին, եւ երբ յանդիմանեն դիւերնք՝ կը պատասխանեն թէ մենք Աստուծոյ մեր զոհը կը զոհենք։ Սակայն լաւ է անոնց սորվեցնել որ նաեւ հին Օրէնքին մէջ զոհերը խոտելի էին. վասն զի Աստուած կ'ըսէ Դաւթի ձեռքով. «Չուարակներու միւր չեմ ուտեր եւ նոխարներու արիւնը չեմ խմեր»<sup>1</sup>. եւ «որովհետեւ պատարագ չուղեցիր եւ ողջակէզներու չհաճեցար»<sup>2</sup>. Երեմիա՝ «Չեր ողջակէզները ընդունելի չեն, եւ ձեր զոհերը ինձ քաղցր չեն»<sup>3</sup>։ Իսկ Միքէ՝ «Չի հաճիր Տէրը հազարաւոր խոյերու եւ պատարագներու. ցուցուցաւ քեզի, մարդ, թէ ի՞նչ կ'ուզէ Տէրը քեզմէ՝ արդարութիւն ընել եւ սիրել ողորմութիւն»<sup>4</sup>։

<sup>1</sup> Սաղմ. ԽԹ., 13. ստոր. 50, 13:  
<sup>2</sup> Սաղմ. Ծ., 18. ստոր. 50, 16. թէ կամեցեալ էր պատարագս մատուցանէաք էւն:  
<sup>3</sup> Երեմ. Զ., 20:  
<sup>4</sup> Միքէ. Զ., 7, 8. Եթէ իցէ՝ ընկալցի՞ր Տէր զհազարաւորս խոյոց կամ ընդ բնութեանս նոխարաց պարեալ։

Սամուէլ՝ «Ահա լսելը լաւագոյն է քան զօհը, եւ հնազանդիլ լաւագոյն քան խոյերու ճարպը»<sup>5</sup>. Եսայի՝ «Այն որ եղ կը զոհէ՝ իբր թէ մարդ սպաննէր, այն որ գառնուկ կը զոհէ՝ իբր թէ շուն սատկեցուցած ըլլար. նաչիհ կը մատուցանէ իբր թէ խոյի արիւն ըլլար. խունկ կ'ընծայէ՝ իբր թէ կուռքերու երկրպագութիւն ընէր»<sup>6</sup>։

Եթէ հին օրէնքին մէջ զոհերը խոտելի էին՝ որչափ աւելի նորին մէջ։ Կ'ըսէ Պողոս թէ «մեր Պասեքը Մեսիան է, որ զոհուեցաւ մեր փոխարէն»<sup>7</sup>. Եւ Երրայեցեոց (թղթին) մէջ կը գրէ. «Հիմայ դարերու կատարածին՝ անգամ մը զոհեց իւր անձը մեզի համար պատարագով էւն»<sup>8</sup>. մէկ անգամ միայն զոհուեցաւ անոնց համար որ իրմով յաւիտեան պիտի սրբանային<sup>9</sup>։ Իսկ մեր Տէրը ըսաւ. «Գացէք սորվեցէք թէ ի՞նչ կը նշանակէ ողորմութիւն կ'ուղեմ եւ ոչ զոհ»<sup>10</sup>։

Կիւրեղ Եսայեայ Մեկնութեան մէջ (կ'ըսէ). «Մէկ զօհ ընջեց Դեւին ու անոր քահանայութիւնը»<sup>11</sup>։ Աստուածաբանը Պասեքի ճառին մէջ՝ «Աստուծոյ ոչ մատաղ երինջ, ոչ նորարոյս եղջիւններով գառնեք զօհեցէք, այլ զօհացողութեան զօհեր»<sup>12</sup>։ Եւ Կարկուտի Հարուածի մասին ճառին մէջ՝ «Եւ ոչ ողջակէզներով ու զօհերով պիտի դարձնէիր բարկութիւնը եւ անոնց ողորմէիր»։ Յովհաննէս Ծաղկաղարդի ճառին մէջ՝ «Օրհնեալ է այն որ եկաւ Տիրոջ անուամբ խաչափայտին վրայ զօհուելու եւ ոչնչացնելու բոլոր զօհերը»<sup>13</sup>։ Իսկ Մատնութեան ճառին մէջ կ'ըսէ՝ «Գառնուկը խորհրդապատկերն էր միւս հոգեւոր գառնին, եւ առաջին ոչխարը՝ շուքը ճշմարիտներուն. Արդարութեան արեւը ծագելէն ետք շուքն անհետացաւ»<sup>14</sup>։ Յովհաննէս կ'ըսէ. «Ահա Գառնը, որ աշխարհիս մեղքերը կը բառնայ»<sup>15</sup>. Եւ Պողոս՝ «Իր անձով մեր մեղքերը սրբեց»<sup>16</sup>։

բարտաց էւն. ասոր՝ չի հաճիր Տէր հազար խոյերու, նաեւ ոչ բիւր պարարտ նոխարներու էւն:  
<sup>5</sup> Ա. թագ. ԺԵ., 22:  
<sup>6</sup> Ես. 42., 3:  
<sup>7</sup> Ա. Կորնթ. Ե., 7. քանզի գառնիկ մեր գեանս Բրիտանոս: Պեղիտ. նոյն Բարսաղիբի հետ:  
<sup>8</sup> Եբր. Թ., 26:  
<sup>9</sup> Եբր. Թ., 28:  
<sup>10</sup> Մատթ. Թ., 13:  
<sup>11</sup> Patr. Gr. LXX., III, 909.  
<sup>12</sup> Patr. Gr. XXXVI., II, 656.  
<sup>13</sup> Հիմա. Patr. Gr., LIX, VIII, 706—708:  
<sup>14</sup> Patr. Gr. XLIX., II., 379.  
<sup>15</sup> Յովհ. Ա., 29:  
<sup>16</sup> Եբր. Ա., 3. սրբութիւն մեղաց մերոց արարեալ։